

ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆակտորինգի պայմանագրի, ինչպես նաև դրա հիման վրա առաջացող պարտավորական հարաբերությունների բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել այդ պայմանագրի սուբյեկտների իրավական կարգավիճակը և դրա առանձնահատկությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք²) 892-րդ հոդվածից հետևում է, որ ֆակտորինգի պայմանագրի կողմերն են ֆինանսական գործակալը (ֆակտորը) և հաճախորդը (վարկատուն):

Ֆինանսական գործակալը ֆակտորինգի պայմանագրով ֆինանսավորում իրականացնող կողմն է, այսինքն այն կողմը, որը, մյուս կողմից՝ հաճախորդից, ստանալով նրա դեբիտորական պարտավորությունները, հաճախորդին տրամադրում է ֆինանսական միջոցներ իր գործունեությունն իրականացնելու համար:

Անդրադառնալով այն հանգամանքին, որ ֆինանսական գործակալին այլ կերպ անվանում են ֆակտոր, նշենք, որ «ֆակտոր» եզրույթը առաջացել է անգլերեն «factor» բառից, որը թարգմանաբար նշանակում է կոմիսիոներ, գործակալ միջնորդ³: Ֆակտորինգի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորման գործառույթ իրականացնող սուբյեկտի նման անվանումն ունի պատմական հիմքեր, որոնք սկիզբ են առել Անգլիայում և ԱՄՆ-ում 19-րդ դարի վերջում 20-րդ դարի սկզբին: Ուսումնասիրելով ֆակտորինգային գործարքների առաջացման պատմությունը Ա. Ս. Կոմարովը նշում է, որ ի սկզբանե ֆակտոր անվանում էին առևտրային գործակալներին, որոնց գործառույթների մեջ էր մտնում ոչ միայն պրինցիպալի կողմից արտադրվող ապրանքների իրացումը, այլև պրինցիպալին դրամական կանխավճարների տրամադրումը և նրա գործունեության արտադրու-

¹ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Ա. Հայկյանց:

² ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

³ См. u www.factorings.ru (29.11.2015թ. դրությամբ):

յան վարկավորումը: Կոմիսիոները (ֆակտորը) վաճառում էր ապրանքը և հաշիվ էր ներկայացնում իր անունից, առանց պրինցիպալի անունը նշելու: Եթե նա ապրանքը վաճառում էր ապառիկ, ապա ստանձնում էր ռիսկը՝ լրացուցիչ վճարի դիմաց տրամադրելով վճարման ստացման երաշխիք (դելկրեդերե): Ավելի ուշ որոշ կոմիսիոն գործակալներ հրաժարվեցին առևտրային գործառույթներից և իրենց ուժերը կենտրոնացրեցին հաճախորդներին սպասարկման ֆինանսական կողմի վրա: Աստիճանաբար ֆակտորներն անցան մատակարարի վճարային պահանջների (գնորդի կողմից դուրս գրված հաշիվ-ապրանքագրերի) ուղղակի գնմանը¹:

Անգլիական, ամերիկյան իրավաբանական գրականության մեջ, ֆակտորինգային հարաբերությունների կարգավորմանը նվիրված Միջազգային ֆակտորիզի մասին «ՈՒՆԵԴՐՈՒՍ» կոնվենցիայում (Օտտավա, 28 մայիսի 1988 թ.) ֆինանսավորում իրականացնող սուբյեկտն անվանվում է «ֆակտոր»: Ռուսական իրավաբանական գրականության մեջ հանդիպում է ինչպես ֆակտոր անվանումը, այնպես էլ ֆինանսական գործակալ անվանումը, ինչը պայմանավորված է օրենսդրական ձևակերպմամբ²: ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ գլուխը, որը պարունակում է ֆակտորինգային հարաբերությունները կարգավորող նորմեր, վերնագրված է «Ֆինանսավորում դրամական պահանջի դիմաց», իսկ նույն օրենսգրքի 824-րդ հոդվածի համաձայն՝ «Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրով մի կողմը (ֆինանսական գործակալը) հանձնում կամ պարտավորվում է մյուս կողմին (հաճախորդին) հանձնել դրամական միջոցներ՝ ի հաշիվ հաճախորդի (պարտապանի)՝ երրորդ անձից (պարտապանից) ունեցած դրամական պահանջի, որը բխում է հաճախորդի կողմից՝ երրորդ անձին ապրանքներ տրամադրելուց, նրա համար աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց, իսկ հաճախորդը ֆինանսական գործակալին զիջում է կամ պարտավորվում է զիջել այդ դրամական

¹ St' u **Новоселова Л. А.**, «Финансирование под уступку денежного требования. Экономическое значение финансирования под уступку денежного требования» (հղված www.szrf.ru կայքից 20.06.2015 թ. դրությամբ):

² St' u Гражданский кодекс Российской Федерации N51-ФЗ от 21.10.1994г. по состоянию на 21.11.2015 г., ст. 824. (www.gk-rf.ru կայքից 2.12.2015 թ. դրությամբ):

պահանջը»։ Ինչպես տեսնում ենք, օրենսդրական ձևակերպման մեջ առկա չէ «ֆակտոր» եզրույթը, սակայն, քանի որ ռուս իրավագետները ֆակտորինգային հարաբերությունների ուսումնասիրությունների ժամանակ զուգահեռներ են անցկացնում ֆակտորինգի արտասահմանյան կարգավորումների հետ և օգտվում են համապատասխան տեսական գրականությունից, ռուսական իրավաբանական գրականության մեջ հավասարապես շրջանառվում են ինչպես «ֆակտոր», այնպես էլ «ֆինանսական գործակալ» եզրույթները։

ՀՀ օրենսդրությունը Օրենսգրքի 892-րդ հոդվածով որդեգրել է ուսումնասիրվող պայմանագրի և այդ պայմանագրի շրջանակներում ֆինանսավորում իրականացնող սուբյեկտի երկակի անվանման տարբերակը, այնպես որ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի սուբյեկտն անվանվում է կամ ֆինանսական գործակալ, կամ ֆակտոր՝ այդ եզրույթներն օգտագործելով որպես հոմանիշներ։

Սակայն հարց է առաջանում, թե ով, իրավունքի որ սուբյեկտները կարող են հանդես գալ որպես ֆակտոր։

Օրենսգրքի 893-րդ հոդվածի համաձայն՝ «Որպես ֆինանսական գործակալ՝ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրեր կարող են կնքել բանկերը և այլ վարկային կազմակերպությունները, ինչպես նաև նման տեսակի գործունեության իրականացման թույլտվություն (լիցենզիա) ունեցող այլ առևտրային կազմակերպությունները»։

Բանկերը և այլ վարկային կազմակերպությունները ֆակտորինգային գործունեություն իրականացնելու իրավունք ձեռք են բերում իրենց լիցենզիայի ուժով։ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի¹ 4-րդ հոդվածի համաձայն. «Բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի սույն օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիաների հիման վրա իրականացնել բանկային գործունեություն»։ Նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, դրանց մասնաճյուղերը, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող են՝ ... տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրա-

¹ ՀՀԱԺՏ 1996/12:

կանացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ»:

«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարկային կազմակերպությունը սույն օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստացած իրավաբանական անձն է, որն իրավունք ունի իրականացնել սույն օրենքով սահմանված գործունեության տեսակները»:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ «Վարկային կազմակերպությունը սույն օրենքով սահմանված լիցենզիայի հիման վրա կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը ... տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ»:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ բանկի կամ վարկային կազմակերպության լիցենզիա ունեցող կազմակերպությունն արդեն իսկ հանդիսանում է պոտենցիալ ֆակտոր:

Սակայն, խնդիր է առաջանում «նման տեսակի գործունեության իրականացման թույլտվություն (լիցենզիա) ունեցող այլ առևտրային կազմակերպությունները» արտահայտության կապակցությամբ: Մասնավորապես, հարց է առաջանում, թե որ մարմինն է տրամադրում համապատասխան թույլտվությունը (լիցենզիան), ինչ չափանիշների պետք է համապատասխանի առևտրային կազմակերպությունը ֆակտորինգային գործունեության թույլտվություն ստանալու համար:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի¹ 43-րդ հոդվածով ֆակտորինգային գործունեությունը՝ որպես լիցենզավորման ենթակա առանձին գործունեության տեսակ, նախատեսված չէ: Փաստորեն, Օրենսգիրքը հնարավորություն է տալիս ցանկացած առևտրային կազմակերպության, որը ունի ֆակտորինգային գործունեությամբ զբաղվելու թույլտվություն, զբաղվել նման գործունեությամբ, սակայն այդ հնարավորությունը միայն դեկլարատիվ բնույթ է կրում, քանի որ գործնականում նման հնարավորությունն իրականացնելու մեխանիզմներ նախատեսված չեն:

¹ ՀՀՊՏ 2001.08.08/26(158) Հոդ. 581

Բանկերին և այլ վարկային կազմակերպություններին լիցենզիա տրամադրում է ՀՀ կենտրոնական բանկը: Քանի որ բանկերի և այլ վարկային կազմակերպությունների լիցենզիայով է նախատեսվում ֆակտորինգային գործունեության իրականացման հնարավորություն, և ՀՀ իրավական համակարգի տրամաբանությունը հանգում է նրան, որ որոշակի տեսակի գործունեության թույլտվությունը տալիս է մեկ մարմին, և ոչ թե մի քանի տարբեր մարմիններ, ապա գալիս ենք եզրակացության, որ այլ առևտրային կազմակերպություններին ևս, եթե նրանք զբաղվում են ֆակտորինգային գործունեությամբ, այդ լիցենզիան պետք է տրամադրի ՀՀ կենտրոնական բանկը: Այս կապակցությամբ, սակայն, առաջանում է խնդիր, քանի որ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի¹ 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Իր խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը սույն օրենքով սահմանված կարգով՝ ... լիցենզավորում է բանկերը, օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց, կազմակերպություններին ճանաչում է որպես ֆինանսական խումբ կարգավորում և վերահսկում է դրանց գործունեությունը.»:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համադրությունը և համատեղ վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ կենտրոնական բանկը բացի բանկերից հանդիսանում է նաև արժույթային կարգավորման բնագավառի, արժեթղթերի շրջանառության բնագավառի, ֆինանսավարկային կազմակերպությունների բնագավառի լիցենզավորող մարմին: Նշված բնագավառների սուբյեկտներից որևէ մեկի լիցենզիայում, բացառությամբ բանկերից և վարկային կազմակերպություններից, նշված չէ ֆակտորինգը՝ որպես գործունեության տեսակ, որով նրանք կարող են զբաղվել լիցենզիայի հիման վրա: Ստացվում է մի իրավիճակ, երբ որևէ «X» ՍՊԸ, որը չի հանդիսանում ոչ բանկ, ոչ վարկային կազմակերպություն, սակայն ցանկանում է զբաղվել ֆակտորինգային գործունեությամբ, ստիպված է ձեռք բերել բանկի կամ վարկային կազմակերպության լիցենզիա՝ լիցենզիան ստանալու պահից դուրս գալով «նման տեսակի գործունեության ի-

¹ ՀՀԱԺՏ 1996/12

րականացման թույլտվություն (լիցենզիա) ունեցող այլ առևտրային կազմակերպություններ»-ի շարքից:

Անդրադառնալով արտասահմանյան փորձին՝ նշենք, որ ԵՄ օրենսդրությունը ֆակտորինգը (ռեգրեսի իրավունքով կամ առանց դրա) դիտարկում է որպես վարկի տրամադրման ձև, և, հետևաբար, այն դիտարկում է բանկային գործարքների շարքում, որոնք ենթակա են փոխադարձորեն ճանաչման այն երկրներում, որոնք նշված են Եվրոպական տնտեսական միության 15.12.1989 թ. N 89/646/ԵՏՄ Երկրորդ բանկային դիրեկտիվի հավելվածում: Դա, սակայն չի զրկում անդամ պետություններին ինքնուրույն լիցենզավորման պայմաններ սահմանելու հնարավորությունից: Այսպես՝ Գերմանիայի «Վարկային գործի մասին» օրենքի 1-ին հոդվածը հնարավոր է համարում, որ փոխհատուցման դիմաց դրամական պահանջի ձեռքբերման գործունեությունը կարող են իրականացնել ոչ միայն իրենց անվանման մեջ «բանկ» բառը ունեցող կազմակերպությունները, այլև ֆինանսական կազմակերպությունները, որոնք իրավասու են իրականացնելու բանկային գործարքների նեղ շրջանակ: Միաժամանակ մի շարք այլ երկրների օրենսդրությունը, օրինակ՝ Էստոնիայի (Վարկային կազմակերպությունների մասին օրենքը 05.12.1994 թ. 5-րդ հոդված), Սլովակիայի (Բանկերի մասին օրենքի 1-ին հոդված) չեն ներառում ֆակտորինգը լիցենզավորման ենթակա բանկային գործարքների մեջ, ինչից կարելի է հետևություն անել, որ ֆակտորինգային պայմանագրի կնքումը ընդգրկված է իրավաբանական անձանց իրավասուբյեկտության մեջ¹:

Մի շարք եվրոպական երկրներում շատ ֆակտորինգային կազմակերպություններ ընդհանրապես չեն ենթարկվում որևէ հատուկ կարգավորման (ամենավաղ օրինակը Մեծ Բրիտանիան է), և ֆակտորինգային գործունեություն իրականացնելու համար լիցենզիա չի նախատեսվում: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ, որպես կանոն,

¹ St' u Овейко С., Факторинг: сравнительный анализ российского, зарубежно-го и международного законодательства и практики // Внешнеторговое право. - М., Юрист, 2007, № 1, с. 11-22:

այդ կազմակերպությունները պատկանում են բանկերին, որոնք, իրենց հերթին, ենթակա են բանկային հսկողության¹:

Ինչպես երևում է բերված օրինակներից, ֆակտորին ներկայացվող պահանջների տեսանկյունից ԵՄ անդամ պետությունները բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են այն պետությունները, որտեղ ֆակտորի լիցենզավորումը պարտադիր պայման է (Գերմանիա, Ֆրանսիա, Բուլղարիա) և որպես ֆակտոր կարող են հանդես գալ բանկերը և(կամ) վարկային կազմակերպությունները, իսկ երկրորդ խմբի մեջ մտնում են այն պետությունները, որտեղ իրավաբանական անձի իրավասուբյեկտության բովանդակության մեջ արդեն իսկ մտնում է ֆակտորինգային գործունեություն իրականացնելու հնարավորությունը: Բացի դրանից, այն երկրներում, որտեղ չի պահանջվում ֆակտորի լիցենզավորում, ֆակտորինգի շուկան կանոնակարգվում է ինքնակարգավորվող ֆակտորինգային կազմակերպությունների կողմից, որոնք թելադրում են շուկայի կանոնները, կանխում չարաշահումները և անհրաժեշտության դեպքում իրականացնում ֆակտորինգի պայմանագրի մասնակիցների իրավունքների պաշտպանություն (Մեծ Բրիտանիա):

Ուշագրավ է ՌԴ փորձը ֆակտորին ներկայացվող պահանջների տեսանկյունից: Մինչև «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի երկրորդ մասի 825-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու և «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի երկրորդ մասը գործողության մեջ դնելու մասին» Դաշնային օրենքի 10-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 56-ԴՕ 09.04.2009 թ. Դաշնային օրենքի ուժի մեջ մտնելը (2009 թ. ապրիլի 26-ին) որպես ֆինանսական գործակալ կարող էին հանդես գալ միայն բանկերը և այլ վարկային կազմակերպությունները, ինչպես նաև այլ առևտրային կազմակերպությունները, որոնք ունեին թույլտվություն (լիցենզիա) նման տեսակի գործունեություն իրականացնելու համար²:

Ինչպես տեսնում ենք, մինչև ՌԴ քաղաքացիական օրենսգրքում հիշյալ փոփոխությունների կատարումը ՌԴ քաղաքացիական օ-

¹ St' u Грицай О. Е., «Правовое регулирование факторинга в Европейском союзе и Российской Федерации» («Международные банковские операции», 2009, N4) (www.lawmix.ru կայքից 11.08.2015 թ. դրությամբ):

² St' u www.stgkrf.ru (03.12.2015 թ. դրությամբ):

րենսգրքի 825-րդ հոդվածի ձևակերպումը նույնական էր Օրենսգրքի 893-րդ հոդվածի ձևակերպյալն հետ: Այժմ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 825-րդ հոդվածի համաձայն. «Որպես ֆինանսական գործակալ ֆինանսավորման դիմաց դրամական պահանջի զիջման պայմանագիր կարող են կնքել առևտրային կազմակերպությունները»:

2009 թ. ապրիլի 26-ից սկսած՝ առևտրային կազմակերպությունները կարող են կնքել պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրեր առանց լիցենզիայի¹:

ՌԴ քաղաքացիական օրենսգրքում կատարված այդ փոփոխությունը, ինչպես կարելի է եզրակացնել Օ. Ե. Գրիցայի մեկնաբանությունից, պայմանավորված էր պրակտիկայի պահանջներով: Նա նշում է, որ ՌԴ-ում նկատվում էր ոչ բանկային ֆակտորինգի զարգացման տենդենց: Դա կապված էր նրա հետ, որ հենց մասնագիտացված ֆակտորինգային կազմակերպություններն էին հաճախորդին տրամադրում ծառայությունների առավել ամբողջական փաթեթ, որը ներառում էր ֆինանսավորումը, դեբիտորական պարտքերի կառավարումը, ռիսկերի ապահովագրությունը, տեղեկատվական սպասարկումը, հաշվապահական հաշվառման վարումը և հաճախորդի շահերի ներկայացումը դատական և հարկային մարմիններում այն դեպքում, երբ բանկերը հիմնականում կողմնորոշված են հաճախորդի ֆինանսավորման վրա, ինչի հետևանքով բանկերի կողմից իրականացվող ֆակտորինգը վերածվել է առանց ապահովման վարկավորման²:

Առանց համապատասխան թույլտվության (լիցենզիայի) ֆակտորի գործունեություն իրականացնելու վերաբերյալ տեսական գրականության մեջ արտահայտվել են դրական կարծիքներ: Այսպես, Լ. Ա. Նովոպոլովան գտնում է, որ. «դեբիտորական պարտավորությունների հատուցելի զիջման պայմանագրերը գործարարական պրակտիկայում ինքնըստինքյան չեն ծնում որևէ հատուկ ռիսկեր, որոնք գերազանցեին սովորական առևտրային ռիսկը», ֆակտորինգային գործարքները լիցենզավորման ենթականների դասին դասելը

¹ St' u www.stgkrf.ru (03.12.2015թ. դրությամբ):

² St' u **Грицай О. Е.**, «Правовое регулирование факторинга в Европейском союзе и Российской Федерации» («Международные банковские операции», 2009, N4) (www.lawmix.ru կայքից 11.08.2015 թ. դրությամբ):

նպատակահարմար չէ¹: Նման կարծիքի է հանգում նաև Վ. Ա. Բելովը՝ գտնելով, որ «եթե ֆինանսական գործակալի գործունեությունը իրականացվում է սեփական (հաշվապահական տերմինաբանության համաձայն) միջոցների հաշվին, ապա այն իմաստ չունի լիցենզավորելու, քանի որ նման գործունեությունը չի կարող որևէ մեկին վնասել, բացի հենց գործակալներից: Լիցենզավորման մասին խոսք կարող է սկսել զնալ միայն այն ժամանակ, երբ ֆակտորինգի իրականացման համար կիրառվում են հաշվապահության մեջ ներգրավված կոչվող աղբյուրներ²»:

Լիովին չենք համաձայնում Վ.Ա. Բելովի հետ, քանի որ եթե որպես ֆակտոր դիտարկում ենք բանկերին, ապա նրանք ֆակտորինգային գործարքներ կնքում են ի թիվս այլ միջոցների օգտագործելով նաև հաճախորդների՝ որպես ավանդ ներգրավված դրամական միջոցները, հետևաբար, ֆակտորի կողմից հաճախորդին տրամադրվող գումարների մեջ առկա են նաև ներգրավված միջոցներ: Ինչ վերաբերում է ֆակտորինգային գործունեություն իրականացնելու լիցենզիա (թույլտվություն) ունեցող առևտրային կազմակերպություններին, ապա դրանց առանց համապատասխան լիցենզիայի, հետևաբար նաև՝ հսկողության, թույլատրել մասնակցելու շուկայական հարաբերություններին վտանգ է ներկայացնում ոչ միայն հենց իր՝ ֆակտորի, այլև շուկայի այլ մասնակիցների համար:

Համադրելով վերագրյալ փաստերը և դրանք ենթարկելով համակարգային վերլուծության՝ գտնում ենք, որ Օրենսգրքի 893-րդ հոդվածը հարկավոր է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Որպես ֆինանսական գործակալ՝ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրեր կարող են կնքել բանկերը և այլ վարկային կազմակերպությունները»:

Նման առաջարկը պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Դրանք են՝

¹ St´u **Новоселова Л. А.**, «Уступка права (требования) в коммерческой практике. Факторинг.» (www.consultant.ru կայքից 25.10.2015 թ.):

² St´u **Бондаренко Н. Л., Шкут О. Н.**, «Субъектный состав договора факторинга по законодательству России, Белоруссии, Латвии: сравнительно-правовое исследование» //Вестник Пермского университета 2013 Юридические науки Выпуск 2(20) (www.jurvestnik.psu.ru կայքից 11.08.2015 թ. դրությամբ):

- որպես ֆակտոր հանդես գալու թույլտվություն տալով միայն լիցենզավորված սուբյեկտներին ապահովվում է շուկայի կայունությունը, քանի որ լիցենզիա տրամադրող մարմինը հսկողություն է իրականացնում լիցենզավորված անձի կողմից լիցենզիայի պայմանների կատարման նկատմամբ և կարող է նախականիսել լիցենզավորված անձի հնարավոր չարաշահումները,

- ՀՀ-ում ֆակտորինգի ինստիտուտը դեռևս գտնվում է զարգացման սկզբնական փուլում և, գտնում ենք, որ պետք է խիստ վերահսկողություն սահմանվի այդ ոլորտի նկատմամբ հնարավոր չարաշահումները կանխելու համար: Բանկերը և այլ վարկային կազմակերպությունները այսօր այն առանձնահատուկ սուբյեկտներն են, որոնք ունեն բավարար միջոցներ և ռեսուրսներ զբաղվելու ֆակտորինգային գործունեությամբ: Բացի դրանից, այդ կազմակերպությունները ենթարկվում են խիստ վերահսկողության ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Իսկ համապատասխան թույլտվություն ունեցող այլ առևտրային կազմակերպությունների թույլատրելով որպես ֆակտոր զբաղվել ֆակտորինգային գործունեությամբ Օրենսգիրքը անհասկանալի իրավիճակ է ստեղծում այն հարցերի շուրջ, թե ով պետք է տրամադրի համապատասխան թույլտվությունը: Եթե նման թույլտվություն պետք է տրամադրի ՀՀ կենտրոնական բանկը, ապա, ինչպես արդեն հիմնավորվեց, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված լիցենզիաների հիման վրա ֆակտորինգային գործունեությամբ զբաղվելու իրավասություն ունեն միայն բանկերը և այլ վարկային կազմակերպությունները: Փաստորեն, այլ առևտրային կազմակերպությունները ՀՀ կենտրոնական բանկից ստանալով լիցենզիա, դառնալու են բանկ կամ վարկային կազմակերպություն: Եթե օրենսդրի կողմից Օրենսգրքի 893-րդ հոդվածի գործող ձևակերպումը նպատակ է ունեցել ապահովելու մասնագիտացված ֆակտորինգային կազմակերպությունների ձևավորմանը, ապա որպես նման մասնագիտացված ֆակտորինգային կազմակերպություն կարող են հանդես գալ հենց բանկերը կամ այլ վարկային կազմակերպությունները, որոնք որպես իրենց հիմնական գործունեության ուղղվածություն կընտրեն ֆակտորինգային գործունեությունը,

- ինչպես ցույց է տալիս համաշխարհային պրակտիկան, որպես ֆակտոր հանդես են գալիս կամ բանկերը, կամ բանկային վերահսկողության տակ գտնվող այլ կազմակերպությունները բանկե-

րի դուստր կազմակերպությունները կամ բանկերի առանձանացված ստորաբաժանումները, որոնց ինքնուրույն գործելու լայն հնարավորություն է տրված, սակայն միննույնն է՝ այդ կազմակերպությունները շարունակում են մնալ բանկային համակարգի մաս:

Ֆակտորինգի պայմանագրի մյուս սուբյեկտը հաճախորդն (վարկատու) է: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքի դասագրքում, անդրադարձ կատարելով Օրենսգրքի 892-րդ հոդվածում օգտագործվող ֆակտորինգի պայմանագրի սուբյեկտների անվանումներին՝ հեղինակը նշել է, որ «վարկատու» բառը որպես «հաճախորդ» բառի հավասարաթեք նշելը ճիշտ չէ, քանի որ, հաճախորդը, ըստ էության, ֆակտորի հետ հարաբերություններում վարկառու է, իսկ երրորդ անձի հանդեպ՝ պարտատեր¹: Համաձայնելով նման դիրքորոշման հետ՝ ցանկանում ենք հավելել, որ պահանջի իրավունքը զիջող կողմի նման անվանում չի հանդիպում որևէ այլ իրավական ակտում: Այսպես՝ 1988 թ. մայիսի 28-ին Օտտավայում կնքված Միջազգային ֆակտորինգի մասին կոնվենցիայում² (այսուհետ՝ «ՈՒՆԻԴՐՈՒԱ» կոնվենցիա) հաճախորդը՝ անվանվում է «մատակարար» («ՈՒՆԻԴՐՈՒԱ» կոնվենցիայի 1-ին հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Կոնվենցիայի շրջանակներում ապրանքների առուծախի վերաբերյալ նորմերը կիրառվում են նաև ծառայություններին և դրանց մատուցմանը): Հաճախորդը «մատակարար» անվամբ է հանդես գալիս նաև Միջազգային ֆակտորինգի ղեկավար կանոններում³: ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 824-րդ հոդվածում որպես ֆակտորինգի պայմանագրի կողմ նշվում է «клиента (кредитора)» արտահայտությունը: Սակայն, «кредитор» բառը հայերենում թարգմանաբար նշանակում է ինչպես վարկատու, այնպես էլ պարտատեր⁴: Ֆակտորինգի պայմանագրի բովանդակությունից հետևում է, որ հա-

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք» 2-րդ մաս (փոփոխություններով և լրացումներով) խմբագիրներ՝ Տ.Կ.Բարսեղյան, Գ. Հ. Ղարախանյան, Երևան, 2008, «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, էջ 412:

² Տե՛ս Конвенция «УНИДРУА» о международном факторинге (Оттава, 28 мая 1988), ст. 1:

³ Տե՛ս General Rules for International Factoring Article 03.10.2011 Article 2:

⁴ Տե՛ս Ա. Ս. Ղարիբջան, «Ռուս-հայերեն բառարան», «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1977, էջ 411:

ճախորդը չի հանդիսանում վարկատու, նա որևէ սուբյեկտի վարկ չի տրամադրում: Հաճախորդը իրեն պատկանող պահանջի իրավունքը զիջում է ֆակտորին: Ֆակտորի և հաճախորդի միջև կնքվում է ցեսիայի գործարք, որի բովանդակությունը չի նախատեսում վարկատուի առկայություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք իրավական հստակություն մտցնելու նպատակով Օրենսգրքի 892-րդ հոդվածում «ի հաշիվ հաճախորդի (վարկատու)» արտահայտությունը խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «ի հաշիվ հաճախորդի (պարտատիրոջ)»:

Կարևոր հարց է հանդիսանում այն հանգամանքը, թե ֆակտորինգի պայմանագրում ով կարող է հանդես գալ որպես հաճախորդ:

Օրենսգրքի 892-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաճախորդը ֆակտորին զիջում է երրորդ անձի հանդեպ ունեցած պահանջի իրավունքը, որը բխում է հաճախորդի կողմից՝ երրորդ անձին ապրանքներ տրամադրելուց, նրա համար աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց:

Այստեղ առկա է խնդիր, որը վերաբերում է նրան, թե ով կարող է հանդես գալ որպես հաճախորդ: Օրենսգրքի 892-րդ հոդվածը տառացի մեկանբանությամբ որևէ սահմանափակում չի պարունակում հաճախորդի վերաբերյալ: Դա նշանակում է, որ հաճախորդ կարող է լինել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Սակայն, հաշվի առնելով ֆակտորինգի պայմանագրի բնույթը և դրա կիրառման համաշխարհային փորձը, հարկավոր է հաշվի առնել, որ ֆակտորինգի պայմանագիրը հանդիսանում է առևտրային պայմանագիր, որը կիրառվում է առևտրային շրջանառության մեջ դրա սուբյեկտների պահանջների բավարարման նպատակով: «ՈՒՆԻԴՐԱ» կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կոնվենցիան կիրառվում է այն դեպքերում, երբ ֆակտորինգի պայմանագրի շրջանակներում զիջված դրամական պահանջները բխում են գործարարական գործունեություն իրականացնող մատակարարի և պարտապանի միջև կնքված առուծախի պայմանագրից¹:

¹ St' u Конвенция «УНИДРУА» о международном факторинге (Оттава, 28 мая 1988) ст. 2:

Օրենսգրքի 892-րդ հոդվածի նույնական ձևակերպում է տրված նաև ՌԴ քաղաքացիական օրենսգրքում:

Ն. Վ. Պանտելենան նշում է, որ քանի որ ֆակտորինգի պայմանագիրը կիրառվում է գործարարական հարաբերություններում բիզնեսի ֆինանսավորման նպատակով, ապա այդ պայմանագրում որպես պարտատեր (հաճախորդ) չեն կարող հանդես գալ գործարարական գործունեությամբ չգրադվող ֆիզիկական անձինք¹:

Ե. Ա. Սուխանովը, Լ. Գ. Եֆիմովը և Վ. Վ. Վիտրյանսկին տարբեր հիմնավորումների վրա հիմնվելով ևս գտնում են, որ ֆակտորինգը գործարարական պայմանագիր է և այն չի կարող կնքվել գործարարական գործունեությամբ չգրադվող սուբյեկտի հետ, մինչդեռ այլ կարծիքի են հանգում Լ. Ա. Նովոսյուլովան և Ե. Ե. Շևչենկոն: Նրանք գտնում են, որ ֆակտորինգի գործարքի բովանդակությունը չի գրկում որպես անհատ ձեռներեց չգրանցված ֆիզիկական անձին հանդես գալ որպես պարտատեր և զիջել ոչ գործարարական բնույթի իր պահանջը²:

Ի հակադրումն Լ. Ա. Նովոսյուլովայի և Ե. Ե. Շևչենկոյի կարծիքի՝ նշենք, որ ֆակտորինգի պայմանագիրը ենթադրում է անընդհատ դրամական հոսքեր: Այն նախատեսված չէ դրամական պահանջի մեկանգամյա զիջման և դրա դիմաց մեկանգամյա ֆինանսավորման ստացման համար: Եթե ֆիզիկական անձը, որը չի գրադվում գործարարական գործունեությամբ, ունի դրամական պահանջ և ցանկանում է այդ պահանջը զիջել ու դրա դիմաց ստանալ համապատասխան գումար, նա կարող է կնքել ցեսիայի գործարք և դրանով բավարարել իր պահանջումները: Օրենսգրքում ֆակտորինգի պայմանագրի կառուցակարգի ամրագրումը չի բացառում ցեսիայի գործարքի կնքումը: Ավելին, այն հանգամանքը, որ ցեսիայի գործարքի վերաբերյալ նորմերը ֆակտորինգի պայմանագրի ամրագրմամբ չեն

¹ St' u **Бондаренко Н. Л., Шкут О. Н.**, «Субъектный состав договора факторинга по законодательству России, Белоруссии, Латвии: сравнительно-правовое исследование» //Вестник Пермского университета 2013 Юридические науки Выпуск 2(20) (www.jurvestnik.psu.ru կայքից 11.08.2015 թ. դրությամբ):

² St' u **Бондаренко Н. Л., Шкут О. Н.**, «Субъектный состав договора факторинга по законодательству России, Белоруссии, Латвии, сравнительно-правовое исследование» //Вестник Пермского университета 2013 Юридические науки Выпуск 2(20) (www.jurvestnik.psu.ru կայքից 11.08.2015 թ. դրությամբ):

ճանաչվել ուժը կորցրած, վկայում է այն մասին, որ դրանք երկուսն էլ գործում են հավասարապես, սակայն տարբեր ոլորտներում և այդ ոլորտները չպետք է խառնվեն միմյանց: Ֆիզիկական անձանց միջև, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև դրամական պահանջի զիջման պայմանագրերը, թեկուզ և հատուցելի, պետք է կնքվեն ցեսիայի գործարքի տեսքով, մինչդեռ ֆակտորինգի պայմանագրի սուբյեկտային կազմում չեն կարող որպես պարտատեր հանդես գալ գործարարական գործունեությամբ չգրադվող ֆիզիկական անձինք:

Վերոգրյալից հետևում է, որ ֆակտորինգի պայմանագիր պետք է որակել այն պայմանագիրը, որտեղ որպես հաճախորդ (պարտատեր) հանդես է գալիս գործարարական գործունեությամբ զբաղվող սուբյեկտը, որին իր գործունեության բնույթից ելնելով անհրաժեշտ են դրամական միջոցներ և նա այդ դրամական միջոցները ստանում է բանկի կամ այլ վարկային կազմակերպության հետ կնքելով պայմանագիր, որով բանկին կամ այլ վարկային կազմակերպությանը տրամադրում է իր գործունեությունից առաջացած դրամական պահանջի իրավունքը, դրա դիմաց ստանալով դրամական միջոցներ իր գործունեությունը անդադար շարունակելու համար:

Анна Аветисян

Аспирант Кафедры гражданского права ЕГУ

ОСОБЕННОСТИ СУБЪЕКТОВ ДОГОВОРА ФАКТОРИНГА

В статье исследуются определения субъектов договора факторинга, данные в Гражданском кодексе РА. Сопоставляя действующие законодательные формулировки, основываясь на мнении авторов, выраженные в литературе, выдвигаются предложения вношения изменений в Гражданском кодексе РА, а также на основании теоретического разбора выдвинуто мнение о том, какие субъекты гражданско-правового оборота могут выступать как субъекты договора факторинга.

CHARACTERISTICS OF PARTIES OF FACTORING CONTRACT

The determinations of parties of factoring contract made in Civil Code of RA are discussed in the article. By comparing regulations in different laws, basing on the authors opinions expressed in literature, the author proposes to make some amendments in Civil Code of RA. Also on the base of theoretical analysis it is proposed an opinion who can be a party of factoring contract.

Բանալի բառեր՝ *ֆակտոր, հաճախորդ, ֆակտորինգի պայմանագիր, բանկ, ֆակտորինգային գործունեություն*

Ключевые слова: *фактор, клиент, договор факторинга, банк, факторинговая деятельность*

Key words: *factor, client, factoring contract, bank, factoring activities*